

Միւս ուղերի բողոքականների գործունէութեան հետ մօր ծահօթ չլինելով մի քանի ուղերկութիւններ կը դամ Թաւրիզի բողոքականների մասին:

Թաւրիզում սրանք ըստ երեսթին բաւական ընդարձակ գործունէութիւն ունին: Ըստ երեսթին եմ ասում, որովհետիւ առաջին անգամից աշխաթի են զարնում սրանց շքեղ ժողովարանը, դղակոց և օրիորդաց դպրոցները, լարանական ընկերութիւնը և ալն: Բայց երբ մօտիկից է մարդ ծանօթանում, գենուում է, որ այս բոլորը լվլուսորացիա է, իսկ իրականութեան մէջ դրանք երբէք չեն համապարասիսնում Թաւրիզում եղած բողոքական հասարակութեան չնչին քանակութեանը, Բողոքական ընդանիք, Կթէ չեմ սիսալում, սրանց դեռ չէ աջողեւ ունենալ ուղացիներից, այս բանը խոսրովանում են հէնց քարոզիչները, Ընտանիքում հայրը բողոքական է, մայրը ոչ կամ որդին է դաւանում, կամ ընդհակառակը, Առում են, որ ովքեր էլ իրենց ցանկութեամբ դարձել են նրանց համայնքի անդամ, չէ պատահել, որ մահան բոպէին չկանչեն հայ քահանակ և մեղաչ չգան: Իսկ ժողովարան շատ քչերը կրօնական ջերմեանդութիւնից դրդւած են չաճախում: մեծ մասամբ ժամանակ անցկացնելու համար, անշափահասներին սորիպմամբ են դանում, իսկ ոչ-բողոքականները երբեմն գնում են ախտեղ եւրոպական երգեցողութիւն և ֆիսհարմոնի լսելու Ամեն կիւրակի երեկոյ սրանք ունենում են կրօնական ժողովներ, ուր գարձեալ չաճախում են ոչ ախորժակով, իսկ դահլիճը մեծ մասամբ լցնում են ուղղական երիտասարդութեան պարապ ներկաչացուցիչները, որոնք սիրում են մի կերպ աժամանակ անցկացնել»:

Այս բոլորից պարզ երեսում է, թէ ինչ անբնական բան է սրանց արածը, Ախար Բնչ միորք ունի քրիստոնեակին քրիստոնեակ դարձնել: միթէ իսկապէս սրանք համոզւած են, որ իրենք աւելի լաւ քրիստոնեաներ են, քան իր ազգակին եկեղեցին չաճախող պարզ հայը: Եւ որ սարսափելին է սրանք ձգտում են ազգակին ողին սպանել մարդու «երկնքի քաղաքացի» դարձնելով և աշխարհակին ունան բաներից հեռու պահելով: Ամեն ուսուակ չարիքի զէմ սրանք մի գեղ ունին միան: «աղօթենք», անասրանց հնարք: Մինչև անգամ առանց քաշւելու քարոզում են, որ Տաճկաստանում ալոքան հակը կորորւեցին, որպիշետե լաւ քրիստոնեաներ չէին, իսկ ըստ ումանց, Ասորած անքան սիրեց հակերին, որ չը թողեց երկրի վրայ մնալու, այլ դարաւ իւր մօտից Տեսնում էք, ընթերցող որ Ազւուքի ապ աշխարհները ոչնչով չեն զանազանուում միջնազարեան օրսկուրանուներից, որոնց զէմ իրենք էին մի ժամանակ բողոքում: Ազգպիսով սրանք իրենց հետեղների մէջ մեռցնում են ինքազարդացման, ինքնավսրահութեան ամեն մի ձգորում:

Ժողովարանում լինում է քարոզ, երդ և աղօթք—երբեմն հակերէն, երբեմն թուրքերէն, Թուրքերէն քարոզ լինում է մի քանի թուրք ուն-

կընդիւների և սակաւաթիւ ասորի հաւաքացեալների համար, Մինչև ալժմ սրանք մի թուրք հետեւող են ունեցել միայն, նրան էլ մահմեղականի մոլեռանդութիւնն է մեռացրել, Ասենք դա հասկանալի է, որովհետք մահմեղականը չի կարող թուլ տալ որ մինը իսլամը ուրացած ընդունէ պիղծ վարդապետութիւնը:

Ասեցի, որ բողոքականները արտեղ ունին երկու ուսումնարան, որդարոց և օրիորդաց, Ուսումնարանները 5, 6 տարւակ կուրս ունին, Տարօրինակ է որանց գասաւանդութիւնը, Փոքր երեխաներին անզամ, ասիփնքն առաջին և երկրորդ տարին, զբաղեցնում են հինգից վեց ժամ օրական, և աղջան ժամերը լցնելու համար, ստիպւած են առաջին, երկրորդ և երրորդ տարւակ աշակերտներին աշխարհազրութիւն դաս տալ ինարկէ տարրական ձեռվ, Դասը առաւտօնեան սկսում է համարեան մի անգին ժամերգութեամբ, որ 15 րոպէից աւելի է տևում, երգում են մի հոգեորեգութապա ուսուցիչներից մինը կարում է մի գլուխ աւետարան աշխարհարար, բաւական ժամանակ բացատրում է աշակերդներին դրա բովանդակութիւնը, որ լսում են ինարկէ շատ քչերը միայն,—դրանից լեռոց հետեւում է մի աղօթք—ապա աշակերտները խմբով աւետարանից անգիր մի գլուխ են ասում և նոր ցրում են դասարանները,

Որպէս զի գաղափար դւած լինիմ սրանց հոգեորեգութեամբ մասին, բերեմ մի կրոր:

Հաւատքս քեզ կը նալի,

Ով զառն գողգոթալի.

Փրկիչ, ի մին

Զանիս մոլիկ ըրէ

Իմ մեղքս, Տէր, քաւէ,

Ըլլամ ես լախմ հերէ

Միայն քուկին.

Թող քու շընորհիդ անհոն

Ընէ սիրոս հասդադուն,

Նախանձս վառէ.

Մահամբդ իս կը փրկես.

Ուսորի բոցի մը պէս

Իմ սէրս սաստկապէս

Վառիլ կարծէ, և ալն,

Ահա ալսպիսի երգեր են երգում ծերերից սկսած մինչև 8, 10 տարեկան երեխաները միասին ֆիսո արմոնի ձախակցութեամբ,

Սկսում է պարապմունքը, որ դեռում է $\frac{1}{2}$ ժամ անընդհատ, և բաժնած է երկու մասի, պարապում են զանազան առարկաներ կամ նոյն ուսուցիչը կամ ուսուցիչը փոխում է, Ազդ անընդհատ երկու դասից ինում է 15 րոպէ հանգիստ, որից լեռու զարձեալ նոյն ձեռվ երկու դաս Սրանից լեռու մի ժամ հանգիստ ճաշելու համար, Էլի երեք դաս (իւրաքանչիւրը $\frac{3}{4}$ ժամ, որոնցից երկուսը զարձեալ անընդհատ են) և դպրոցը արձակում է, Ուրեմն, աղօթքն էլ հետը հաշւած՝ $\frac{3}{2}$ ժամնակ պարապունքի միջոցում $\frac{1}{4}$ ժամ միայն հանգիստ կայ:

Բայց որոեղից են սրանց աշակերդները? Թաւրիզի հալոց դպրոցները ըստ երևութիւն միջոց չպիտի դան նրանց աշակերդներ ընդունելու

Քաց... բողոքականները ձրի են ընդունում, երբեմն էլ տալիս են գեռ դասական պիտով, Նորերս միայն սկսել են չնչին վարձ ստանալ, Ուրեմն բնական է, որ չունեռները նրանց մօր կը դան իրենց որդոց, Նթէ թաւրիզի հալոց ուսումնարանները աւելի ապահով լինեն և ընդարձակ, ապինքն հնարաւորութիւն ունենան չմերժել խնդրագուներին դեղի պակասութեան և թոշակի պարծառով, պիտի կարծել, որ բողոքականների ուսումնարանը կը զրկէի իր աշակերդների մեծ մասից, Նրանց աշակերդների միւս մասն էլ հալոց ուսումնարաններից զանազան պարճառներով դուրս արւածներն են, Ալսպիսով՝ համոզմունքով իրենց զաւակներին բողոքականների մօր դուզ ծնողներ շատ օֆիչ են, Ուրեմն չկայ մի դասակարգ որի համար «բողոքական» զպրոցը անհրաժեշտութիւն լինէր, առանց որի անկարելի լինէր կառավարւել:

Բողոքականները ունեն և լսարանական ընկերութիւն, Սրանց ընկերութիւնը հալոց ընկերութիւնից պակաս քեղմնաւոր է, ամիսը մի անգամ են սրանց հրապարակական դասախոսութիւնները տղակոց դպրոցի դահլիճում, իսկ երկու շաբաթը մը անգամ մասնաւոր տներում անդամների համար միան, թէ հրապարակական և թէ միւս դասախոսութիւններին նիւթը բազմադեսակ է, և, ինչպէս հալոց մէջ, գերջում նիւթը ենթարկւում է հրապարակական քննադարութեան և վիճաբանութեան, Դասախոսութիւններ անում են և ոչ բողոքական անձնատրութիւնները՝ Քաց ալստեղ էլ կրօնականութիւնը իւր գործը կարարում է, Եթէ բողոքականներից է դասախոսը անպարհառ նիւթը վերջում ալս կամ ան կերպ կը կապի կրօնականի հետ, իսկ եթէ դասախոսը բողոքական չէ, վիճաբանութիւնների ժամանակ բողոքականներից մինչ ալդ բանը կ'անի, Ալսպէս՝ սրանցում իսկական հանձարը կամ դադանդը կրօնական հաւատքի հետ անանջադ մի բան է, երբ խօսում են կեանքի և մահւան մասին «գիրութեան դեսակէտից», գալիս են ան եղրակացութեան, որ անմահ է նա, ով Ասրուծով մէջ է ապրում, իսկ մեռնում է նա, ով Ասրծուց հեռանում է, Երբ խօսում է սեփականութեան ծագման մասին, խնդիրը բերում կանգնեցնում են անտեղ, որ սեփականութիւն կարող է ունենալ բանական արարածը, մարդը միան, ան էլ բարուկական մարդը, իսկ անսառնները սեփականութիւն չեն կարող ունենալ, որովհետեւ բանական արարածներ չեն, Երբ խօսում է պարսից գրականութեան մասին, այն կարծիքն է լայրնուում, որ պարսիկ բանասրեղծները մի բարձր բան չէին կարող արտադրել, որովհետեւ նրանք ճշմարիտ հաւատացեալներ չէին. վերջապէս խօսում են աշխարհիս եօթն հրաշալիքների մասին, մինը փորձ է անում Պօղոս առաքեալի գործունէութիւնն էլ նոյնպէս հրաշալիք համարել, և այս դեսակ ուրիշ շատ բաներ, Հրապարակական դասախոսութիւններում գոնէ, մարդ կարծում էր, թէ ալս կրօնականութիւնը մէջ չէր

գայ, բաց ոչ. թէս ի հարկէ անցնում է առանց հետևանքի, որովհետեւ,
երբ մինը այդ ուղղութեամբ է սկսում խօսել, ունկնդիրները դրան վե-
րաբերում են, իբրև մի անհրաժեշտ չարիքի, որի համար հարկաւոր է մի
փոքր համբերութիւն, որ վերանայ. Ուրեմն ալսուել էլ վարդելի պարոն-
ները մնում են անբնական դրութեան մէջ, քանի որ հասարակութիւնը իր
բանը գիտէ, մասաւանդ որ վիճաբանութիւնների ժամանակ դրանց կար-
ծիքներին հակառակ կարծիքներ էլ պակաս չեն լինում:

Այս բողոքականների գործունէութիւնը ընդարձակ է Ուրմիակում:
Ալսուել բնակում են Նեսորուական ասորիներ. սրանք հաջոց եկեղեցու
նման մի չին եկեղեցի ունին. սրանք բնակում են մեծ մասով Տաճկա-
ստանում, չին Միջազետքում, Ուրիա, նոյն Ձոլամերկի Մարշմոնի ասորի-
ները—Սրանք չին քաղդէական (խալդեյսկօ) եկեղեցու մնացորդներն են,
որ նեսորուականութեան հալածանքների ժամանակ նվիստից տեղափոխ-
ւեցին Եփրատի ափերը և ալսուել նվիստիա քաղաքում ունէին իրենց բարձր
դպրոցները: Սրանց մէջ էլ կարիք են զգացել քրիստոնէութիւն տարա-
ծելու և դարածում են: Բողոքականները ալսուել ունին մի բժշկական
դպրոց, ուր ֆելդչերներ են պարասպում. ունին ասորիքէն լեզով մի
կրօնական-քաղաքական թերթ, որը այս արգէն 50-րդ տարին է հրատա-
րակում: Սրանց գործունէութիւնը ալսուել ալճքան եռանդուն է, որ չին
եկեղեցու ներկալացուցիչ ասորիներ Ուրմիում չեն մնացել՝ մի մասը կա-
թողիկ է, մի մասը բողոքական, իսկ վերջերում մնացածներն էլ ուսւա-
դաւանութիւն ընդունեցին. Կաթողիկներն էլ ալսուել ունին իրենց թերթը,
որը ասորական ազգանութեան վերաբերմամբ աւելի ազարամիտ է, քան
բողոքականներինը:

Ահա այս է ալսուելի բողոքականների գործունէութիւնը. ամեն աս-
պարիզում երևում է ալս գործունէութեան անբնականութիւնը. մի դեսակ
խուլ բողոք կաէ դեղացի: բողոքականների մէջ զէպի օրար քարոզիչները:
Դպրոցների հաւ ուսուցիչների մէջ ևս որպունչ դպրոցի ոեժիմից: Անուա-
մնաբնիւ, չորհիւ դրամական ապահովութեան, կան և գործում են:

Վերջերումս հար ու կոոր գեղեկութիւններ են սպացւում Սալմաս-
տից, որ ալճուելի հաւերն էլ ուսւադաւանութիւն են ընդունում:

Սալմասորի հաւերը սննդեսապէս շատ հարսաւարութիւնների են են-
թարկում: Պարսիկ պաշտօնեանների սիստէմն է մարդկանց զանազան բա-
ժարկում մեղադրել նրանցից փող կորզելու նպատակով: Սալմասորի. շրջա-
ներում կաէ մի սարփարասոր, ալսինքն քրիստոնեանների դարաւոր Կովկաս-
ցիները անշուշտ լիշում են, որ Վանի վերջին կոռորածի ժամանակ այն-
քարտի պարսից դեսպանը հաւերին պաշտպանութիւն էլ ցուց տւել Կը վե-

չեն նաև թէ ինչ պատիւներ ուրին բագւում և ուրիշ քաղաքներում այդ պարոնին։ Յանկարծ դա նշանակումէ Սալմասում քրիստոնեաների դատաւոր բոլորն էլ չափազանց ուրախանում են .ի նկատի առնելով նրա անձնաւորութիւնը։ Բայց բանից զուրս է գալիս, որ այս պարոնը ամենքին անցնում է իւր կեղեքումներով, ամեն մի էլքից օգուելով տուզանքի է ենթարկում գիւղերը։ մինչև անգամ մարդկանց ընտանեկան վէճերի մէջ է մոնում և ամեն առթից օգուելով՝ սրանից-նրանից զումարներ է կորզում։

Սալմասուցոց այս թշւառութեան վրայ աւելացրէք և այն, որ գարնանը քրդերի արշաւանք է սպասում։

Քոլորն ի հարկէ լիցում են նախանցեալ բարւաշ արշաւանքը Շարաֆ-բէգի քրդերի վրայ Քրդերը ի հարկէ աց չեն մոռացել և մրածում են վրէժ առնել Սալմասորի հակերից։ Պարսից կառավարութիւնը զօրք չունի Սալմասում։ Է, ունենալ էլ, ինչ կարող է անել պարսիկ զինուրը քրդին։ Միակ բանը, որ սարսափեցնում է քրդերին և լիոյէ պահում արշաւանքից, դա Սալմասորի զանազան գիւղերում հաստարւած մի քանի քաջ գաղթականներն են, Այս գաղթականներից մինը մի քրդի ճակարտին դաշոյնով խաչ է կորում, իրեն նշան այն բանի, որ քրդերը չը պիտի համարձակ-էին մուգքը ունենալ Վալմասոր Աւ իրաւ քրդերի ոորքը արդէն կորւել էր Սալմասորից, Բայց առաջին նամակումն գրւած 9 գաղթականների կոռո-րածից լիոյու քրդերը համոզելով, որ հակերն էլ են հալածում նրանց, սիրու են առել և կամաց-կամաց փորձեր են անում Սալմասոր մոնելու Անցեալները 40—50 քուրդ չարձակւել էին Մահլամ գիւղի վրայ բայց չորս հայ քաջ գիւղած գաղթականներից ընդդիմադրութիւն դեսնելով հեռ-ացել էին, այն ինչ միւս գիւղերից բաւական բան չաջողցրել են դանել։

Այսպիսով Սալմասորի հակերը կարող են դուժել իրենց անխոհեմու-թեան համար։

— այսին ամերիան իսլամական ուսուանումն այսպիսով
այս Ռումիանային մասն է լուրջան ոչի այ զի ու լուր-
ջար աշխարհի մաս Այսուանի համար ժամանելու լուրջական ուսու-
մակարդակութակ իւրաքանչ այս այս այս այս այս այս

Հայ պարտականաց հայունաց բան մատնուած այս գալու համար ու ա-
զանց նարան մաս սահմանաց կա իսկունաց ապարանակ ։ Այս ամու-
ղանու իւր քանի ծաղկագիւղի մատնաց այս պարտական և առանձի գուն-
ած հայրան իսկ մատնաց մաս ամառաքան վայա առանձի գունաց այս
մատնուած պարտական և առանձի ամառաքան վայա այս